## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մայիսի 2013թ. թիվ 77-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ
ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու և Շիրակի մարզպետարաններին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 365-Ն որոշման 1-ին կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.13 կետի «դ» ենթակետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. ապրիլի 11-ի N 365-Ն որոշման թիվ 1 հավելվածով Լոռու մարզում իրականացվող օբյեկտներին հատկացված գումարները նպատակաուղղել՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. մայիսի 7
ք.Վանաձոր